№ 33 Հինգշաբթի 2 յուլիսի

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1915

Հինգշաբթի 2 յուլիսի № 33

ՓԱՅԼԱԿ

Քաղաքական, հասարակական ու գրական լրագիր

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԿԻՐԱԿԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Տարեկան գինը — 3 րուբլի, 1/2 տարուանը — 1 ր. 50 կ., 1 ամս. — 35 կ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին՝ առաջին երեսի վրայ—20 կոպ, վերջին ,, ,, —10 ,,

Հասցէն՝ Шуша, Редакція газеты ,,Пайлакъ''. Ганджунцев. ул. домъ Костандова. Schoucha, rédaction du journal ,,Phaïlak''.

ԹՈՒԼԱՑԱՆՔ

Թուլացանք հենց այն ժամանակ, երբ մեր առջև դրած գործը պահանջում է մեզնից աւելի մեծ եռանդ, ուժերի ամենից մեծ լարումն։ Տաճկահայաստանից, Պօլսից և Կիլիկիայից եկած տեղեկութիւնները գերազանցում են միմեանց իրենց անհեթեթութեամբ, սոսկալիութեամբ. երիտասարդ թիւրք ոճրագործ և կարճատես կառավարութիւնը հետամուտ է իրագործելու համիդեան արիւնագիր ծրագրները—Հայաստանը թողնել առանց հայի,—դատարկւում են հայաբնակ գաւառները, աշխատաւոր հայ ժողովրդին բռնի կերպով դուրս են վռնդում իր վաթանից և քշում հեռու Միջագետքի խորքերը. կոտորում են անխնայ, այրում, աւերում, առևանգում։ Րոպէն պահանջում է մեզնից աւելի լարւած աշխատանք, մեծ զոհաբերութիւններ.

Բայց մենք թուլացանք։

Գերմանական ժահրոտ դիւանագիտութեամբ շախազւած թիւրք կառավարութեան մոլեգին քաղաքականութիւնը դիմում է երբեմնի արաբական իշխանութիւնների ձեռք զարկած ժանգոտած զէնքին—բնաջնջել հայ ժողովրդի ղեկավարներին, թողնել մասսան անգլուխ, անառաջնորդ։ Մոմենտը պահանջում է մեզնից ապացուցել կատաղի թիւրք կառավարութեան, որ անհատները չեն գործ ստեղծում, այլ գործը, իրականութիւնն է ծնում գործող և գործին նւիրւած գաղափարական անհատներ։

Բայց մենք թուլացանք։

Տաճկական բռնակալութեան ճիրաններից ազատւած տասնեակ հազարաւոր հայեր մատնւած սովի, մերկութեան և զանազան հիւանդութիւնների մեր օգնութեանն են սպասում, իսկ նրանց հարազատներն ու եղբայրակիցներն օրեր են հաշւում և ռուս քաջարի զօրքին ու հայ անվեհեր կամաւոր մարտիկներին են սպասում կոտորածի ուրւականին աչքների առջև։ Րոպէն մեզնից գործ է պահանջում և ինտենսիւ աշխատանք։

Բայց մենք թուլացանք։

Այսպէս է գոնէ Շուշում և ամբողջ Ղարաբաղում։

Ղարաբաղի «Եղբայրական Օգնութիւնը» և նրա կոմիտէն երբ նոր էին գործի ձեռնարկել, եռանդ, աշխատանք չէին խնայում. շարունակ ժողովներ, որոշումներ, մի խօսքով կենդանի գործ։ Կոմիտէն պարբերաբար ժողովի էր հրաւիրում հասարակութեան տարբեր խաւերին, ամսավճարներ նշանակում, ժողովարարութիւններ կազմակերպում, գիւղերը մարդիկ ուղարկում կազմակերպելու և հանգանակութիւն կատարելու։ Գործը տարւում էր կանոնաւոր, տւած արդիւնքը՝ բաւարար։ Անցաւ մի քանի ամիս, կարիքը դարձեալ մնաց, էլ աւելի մեծ չափեր ընդունեց։

Բայց մենք թուլացանք։

Սակայն թուլանալ այնպիսի մի ժամանակ, երբ գործի յաջող սկիզբը վաղուց դրւած է և մի մասը կատարւած, երբ ակնկառոյց սպասում ենք գործի վախճանին, մեր տարիներով տենչած ու փափագած իղձերի իրականանալուն, եթէ ոչ յանցանք, գոնէ դատապարտելի անտարբերութիւն է։ Թուլանալ այնպիսի մի ժամանակ, երբ դաշնակից պետութիւնները, ժողովուրդները լարել են իրենց ամենավերջին ուժերը, հերոսական ճիգ ու ջանք են թափում գլորելու թշնամուն, յանուն ամենագեղեցիկ սկզբունքների ու ազատ կեանքի, երբ միահամուռ գործունէութիւնը բոլոր խաւերի ու հոսանքների, համարւում է անհրաժեշտ պայմանը՝ յաղթութեան, միանգամայն պախարակելի է։

Թուլանալը փոքրոգիների և վատերի բաժինն է, թող հրաժարւի «Եղբայրական Օգնութեան» կոմիտէն՝ այդ ոչ ցանկալի բաժնից և շարունակի իր նախկին գործունէութիւնը նոյն եռանդով և նոյն թափով։

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

«Վերջին տարիներս մամուլը յաճախ է գրում կօօպերատիւ ընկերութիւնների մասին և դրանց իրագործման պարտականութիւնը դնում է գիւղական ուսուցչի վրայ...

Ս. Բօղդանիչ. «Մշակ» № 139.

Որ հայ ուսուցչութիւնից, մանաւորապէս գիւղական ուսուցչութիւնից, մեծամեծ պահանջներ են անում և յաճախ շատ անտեղի,—դա նորութիւն չէ ոչ ոքի համար։ Մեծ մասամբ շատ անփորձ, աշակերտական նստարանը դեռ նոր թողած պատանին, որ ուսուցչութեան ցուպը ձեռքն առած մտնում է գիւղը, իր գործունէութեան հենց առաջին օրւանից, լսում է այդ հրամայական պահանջները։

Գիւղական հասարակութիւնը, առաւել ևս աշակերտների ծնողները, պահանջում են, որ ուսուցիչը երեխաների հետ պարապելու չափ, իրենց համար խնդիրքներ յօրինէ, զինւորացուներին՝ զինւորութիւնից ազատելու խորհուրդներ տայ, անցագրային վկայականներ կազմէ և այլն։

Երեցփոխն ու քահանան պահանջում են, որ ուսուցիչը աշակերտներին «ժամասելը» սովորեցնի, նշխարների թաղմանը եկեղեցում օգնելու համար։ Հոգաբարձութիւնը պահանջում է, որ ուսուցիչը ամեն ինչ մի կողմ թողնի և հենց իր, ուսուցչի օգտի համար էլ է, ներկայացումներ կազմակերպի, «աւետիս» ման գայ, բուֆէի բացը ծածկելու համար։

Հայ գիւղատնտեսն ու բժիշկը պահանջում են, որ գիւղական հասարակութեան մէջ ուսուցիչը տարածէ իրենց բրօշիւրները, դասախօսութիւններ կազմակերպէ, սերմեր տարածէ, հիւանդ ծառերը բժշկէ և այլն։

Հայ տնտեսագէտը իր հարցացուցակներն է ուղարկում՝ տնտեսագիտական ուսումնասիրութիւնների համար նիւթ ժողովելու։

Հայ ազգագրագէտը թերթերում յայտարարութիւններ է տպում և թախանձում է հայ գիւղական ուսուցիչներին, որ վերջիններս իրենց աշակերտների հետ միասին, տներին հաւաքեն՝ առակներ, առածներ, ասացւածքներ և շուտասելուկներ, խոստանալով տպագրել հաւաքողների անունները։

Թեմական տեսուչը պահանջ է դնում որ ուսումն. տարւայ ընթացքում պարբերաբար կազմակերպւեն դպրոցական հանդէսներ, ծխական ժողովներ, խմբական զբօսանքներ և էքսկուրսիաներ։

Հայ լրագրողը դատափետում է գաւառական ուսուցչի ինէրտութիւնը, անտարբեր վերաբերմունքը «հասարակական ցաւերի» հանդէպ, պահանջում է, որ ուսուցիչը լինի զգայուն, թղթակցութիւններ գրէ, կռիւ յայտարարէ ամբողջ աշխարհին և վերջապէս թերթը տարածէ...

Շշմած է հայ ուսուցիչը, չգիտէ, որը անէ և որը թողնէ. պահ մի նա նոյնիսկ մոռանում է, որ ունի որոշ պարտականութիւն և ենթակայ է պատասխանատւութեան։

Հիմի էլ պ. Բօղդանիչն է հրապարակ եկել և կօօպերատիւ ընկերութիւնների իրականացման պարտականութիւնները դնում է գիւղական ուսուցչի վրայ, խոստանալով «անվախ և անդաւաճան» գործչի հռչակ պարգևել այն անհատ ուսուցիչներին, որոնք ժամանակի, տարածութեան և միջավայրի հետ կապւած առանձնայատկութիւններն ու խոչնդոտները մի կողմ թողած, ամեն ինչ թասիբի և բարի կամեցողութեան խնդիր շինած՝ կօօպերատիւներ կը ստեղծեն թէկուզ հենց մի արջի անկիւնում, ի փառս նորելուկ «տնտեսագէտների»։

Պակաս պահանջկոտ չէ նաև գիւղից դուրս ապրող «գիւղական երիտասարդութիւնը», որ երբեմն մի քանի գրօշ նւիրելով դպրոցին, պահանջում է ուսուցչից՝ իրականացնել այն ամենը, ինչ տեսնում է այդպիսի «երիտասարդի» աչքը քաղաքներում։

Շնորհիւ հայ կեանքի զարգացման իւրայատուկ պայմանների, վերջին 40 տարւայ ընթացքում չէ եղել մի խնդիր մեր կեանքում, որ չկապւի այսպէս կամ այնպէս հայ ուսուցչութեան հետ. և իզուր չէ ասել հայ ազատագրութեան առաջնորդներից մէկը, թէ հայ ուսուցչութիւնն ու հայ վերածնութիւնը կապւած են իրար հետ և անբաժանելի են։

Եթէ նոյնիսկ հարևանցօրէն համեմատելու լինինք այն պահանջները, որ հայ հասարակութիւնն ու մամուլը առաջադրել են հայ ուսուցչութեան՝ տասնեակ տարիներ առաջ և այժմ,—մեծ տարբերութիւն կը նկատենք։

Առաջ հայ ուսուցչից պահանջւում էր՝ գլխաւորապէս աշխարհիկ ուսման գաղափարը ժողովրդականացնել, երեցփոխների հաշիւները քննել, գիրք ու լրագիր տարածել և այլ անմեղ բաներ, այժմ այս ամենի հետ՝ կարդալ դասախօսութիւններ, կատարել ուսումնասիրութիւններ, ստեղծել վարկային ու սպառողական հիմնարկութիւններ և այլն և այլն, գործեր, որոնք բոլորն էլ պահանջում են լուրջ պատրաստութիւն։ Թէ որպիսի չարիք են բերել շատ ազնիւ և պարտաճանաչ հայ երիտասարդ ուսուցիչներ իրենց ղեկավարութեանը յանձնւած դպրոցների գլխին հենց միմիայն այն պատճառով, որ ցանկացել են իրենց կարդացած քարոզներն իրա-

կանացնել, կը բերենք շատերից մի օրինակ։ Իմ հարևան գիւղի ուսուցիչը, որ մի հռանդուն պատանի էր, ցանկանում է իր գիւղում սպառողական խանութ հիմնել։ Բարեբախտաբար գիւղը չէ ունենում խանութպաններ. բայց երբ ուսուցիչը, ոգևորւած քարոզում է, թէ սպառողական կօօպերացիան ապագայում ինչեր կարող է անել չքաւոր դասի համար, այդտեղ արդէն «մեծամեծերը» իրար են անցնում, դպրոցը զրկում են ծխական տուրքից, որպէսզի դպրոցի փակումով իրենց տիրապետութեան հիմքերը ամրանան։ Հազիւ հազ յաջողւում է, մի քանի ազդեցիկ մարդկանց մէջ ձգելով, հարցը «անուշութեամբ փակել»։ Մի այլ բարեխիղճ ուսուցիչ ահագին աղմուկի պատճառ էր դարձել նրանով, որ ջրաղացից եկող գիւղացուն յանդիմանել էր և սպառնացել օրէնքով, թէ ինչու նա իր ձիուն ծանր բեռն էր բարձել, չարչարել խեղճ կենդանուն, որ թոյլատրելի չէ կենդանիներին հովանաւորող ընկերութեան կանոնադրութեամբ։

Ահա թէ ինչ։ Բայց ինչով են մեղաւոր այդ ուսուցիչները. նրանք ցանկացել են միայն իրականացնել այն, ինչ ամեն օր նրանց ականջին փչել է քաղքենի մամուլը. որի համար գոյութիւն չունին որևէ միջավայրի առանձնայատկութիւնների ու նախադրյալների հարցերը։ Ամեն ինչ կարելի է իրականացնել՝ ամենուրեք. արէք ուրեմն այս ինչն ու այն ինչը և մենք ձեզ կանուանենք «անվախ և անդաւաճան գործիչներ»։ Եւ մարդիկ աշխատում են այդ ուղղութեամբ, բան ու գործ թողած. այնինչ, այժմեան ուսուցչից, անցեալի հետ համեմատած, ահագին բան է պահանջւում։

Եթէ այսօր, որևէ արջի անկիւնում մուրացկանական վարձատրութեամբ և ծանր աշխատանքի տակ նահատակւող հայ ուսուցչի գործն ու տւած արդիւնքը գնահատելիս զինւում են Հերբարտ Ցիլլերով, Լայով ու Մէյմանով, Մէսմէր ու Ֆօն-Զալլվիւրկով, իրաւունք չունինք արդեօք պնդելու, որ այդ նոյն ուսուցիչը շատ և շատ մեծ բան ունի անելու հէնց իր մասնագիտութեանը հմտանալու համար. այդ չէ՞ պահանջում արդեօք նրա պատիւը և այն գործը, որին ծառայելու կոչւած է։

Այլ են ժամանակները և պայմանները։

Դիլլետանտները այսուհետ տեղ ունենալ չեն կարող, ինչ ասպարիզում էլ երևան գալու լինին։ Այսուհետ գաւառական ուսուցիչը մենակ չպիտի գործի և չէ էլ կարող. այդ վեր է նրա ուժերից։

Բոլոր ճշմարիտ ժողովրդասէրները և ժողովրդի անունով ճչացող այդ բոլոր բժիշկները, գիւղատնտեսները, կօօպերատորները, եթէ կամենում են և եթէ կարող են, թող իրականացնեն իրենց գաղափարները իջնելով ժողովրդի մօտ. ուսուցիչներից նրանց կօգնեն նրանք, որոնք պատրաստւած են այդպիսի աշխատանքի համար. իսկ այդպիսիները Բօղդանիչների քարոզներին և ատտեստացիային չեն սպասում։

Ուսուցիչները ամենից առաջ պիտի զինւեն գոնէ Ելնիցկիով, Վիշնևսկիով և Ադօլֆ Ռուդէով։ Ահա ինչ կը ցանկանանք ուսուցիչներին։

Մելք. Նասյեան

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՆՑ ՀԱՅԻ

Անցեալները հայ թերթերից մէկում կարդացի, թէ ինչպէս մի գիւղում ժողովարարութիւն անելիս են եղել. փողոցում մի կին ձայնը դողալով հարցնում է՝ «էդ ինչի համար էք հաւաքում».—«Կամաւորների» լսւում է հաւաքող խմբի միջից. «Սպասէք», կանչում է կինը, նստում ձիւնի վրայ, հանում ոտքից գուլպաները, հագնում մաշւած չուստերն և տալիս է ասելով. «Էլ ոչինչ չունեմ տալու, էս մի ջուխտ գուլպաներն են, ուղարկէք, թող հագնի իմ ախպէրներից մէկը»...

Նման պատկերներ ու փաստեր շատ ենք գտնում հայ գիւղական իրականութեան մէջ, նոյն իսկ քաղաքների չքաւոր դասակարգի կեանքում։

Բայց և կայ մի այլ իրականութիւն, աւելի բնորոշ, աւելի խրատական։

Մոսկվայի հայ գաղութը հաշւում է իր մէջ տասնեակ միլիօնատէրեր. այդ գաղութի վրայ պարտաւորութիւն է դրւած, ի հարկէ բարոյական պարտաւորութիւն.

Հայ գաղթականների, Տաճկահայաստանի լքւած ու տառապող ժողովրդի համար հասցնել Թիֆլիսի հայ կենտրոնական կոմիտէին մի տարւայ ընթացքում 800 հազար ռուբլի։

Իսկ այդ գաղութը տւել է մի տարւայ ընթացքում, որ շուտով լրանում է, մինչև այժմ մօտ 300 հազար ռուբլի։

Մի գաղութ, որի միլիօնատէր անդամների համար դա մի գիշերւայ թղթախաղի տանուլ տւած փող է, մի օր բորսայում կորցրած գումար։

Բայց Մոսկվան միայնակ չէ։ Նրանից յետ չեն մնում Նոր-Նախիջևանը, Արմաւիրը, Թիֆլիսը, Բագուն և այլն և այլն։

Ամենուրեք մեր հարուստ «ազգայինները» այնքան պարտաճանաչ են, այնպէս են կատարում իրենց խոստումները.

Որ այսօր հայ թերթերի էջերում Հ. կենտրոնական կոմիտէն իր աղերսական կոչերով դիմում է ընդհանուր հայութեան.

«Պէտք է օգնել, պէտք է փրկել հայ ժողովրդին, ով ինչով կարող է».

Բոլոր տեղական գործիչներից, նըպաստամատոյց բոլոր հասարակական մարմիններից այսօր միալար մի ձայն ենք լսում. ժողովուրդը ձեռքից գնում է, շտապեցէք օգնութեան հասնել, ապա թէ ոչ ուշ կը լինի և կորուստն անդառնալի։

Սա մի օրահասական մօմենտ է, երբ հայ ժողովուրդի ոչնչացման գործն են կատարում մեր թշնամիները.

«Հայաստանն առանց հայի».

Ահա այն նշանաբանը, որ դարերով շարունակ դիւական ոգևորութեամբ կատարել են Թիւրքիայի իշխողները. և այսօր իրականացած է իրենց փայփայած նպատակը.

Երբ մի կողմից՝ հուր և սուրն է գործում, իսկ միւս կողմից՝ սովն ու ճարակող մահացու հիւանդութիւններն են առատ հունձ տեսնում։

Սակայն չկարծէք, որ դա միայն Սուլթան Համիդի արժանի ժառանգներն են անում. չխաբւէք, որ դա միայն Թիւրք քաղաքականութեան պըտուղներն են.

«Հայաստանն առանց հայի»։

Դա հենց իրենք հայերն են նպաստում իրագործելու։

Ոչ այն հայերը, ոչ այն գեղջկուհին, որ հանում է իւր ոտից վերջին գուլպաներն ու հագնում մաշւած չուստերը։ Ո՛չ։

Այլ հայ բուրժուան, հարուստ մեծատունը, որ փայլում է իր լայկած կօշիկներով, գունաւոր մետաքսէ գուլպաներով։

Գեղջկուհին, ասում է. «Թող հագնի իմ եղբայրներից մէկը» և փրկում է մի հայի կեանք։ Նա չի դաւանել ազգային իդէալներ, նա բնաւ—երբէք չի խօսել, չի ճառել ազգասիրութիւնից։

Իսկ հայ բուրժուան։ Նա գիտէ ամենուրէք իր ազգայնական զգացմունքներն ի ցոյց հանել, ազգային իդէալներ յօրջօրջել, ազգասիրական քարոզներ կարդալ ու լսել. «հայ ազգ, հայութիւն, հայ եկեղեցի»—ահա նրա սիրտած բառերը։

Ապա համարձակւիր նրան ասել. դու և այլ նրա ազգային պատիւը վիրաւորող որևէ ածական.

Նա անշուշտ կապտակի այդ յանդգնին, սկանդալ կը բարձրացնի։

Բայց և այնպէս նա չի հանի իւր նուրբ գուլպաները, չի հանի իւր փայլուն կօշիկը.

Երբ «Հայաստանն առանց հայի» ծրագիրը՝ նրա անուշահոտ օծանելիքին սովոր քթի տակ, նրա կուրացած աչքերի առաջ այսօր սպառնում է իրականութիւն դառնալ...

Երևակայեցէք, հայ բուրժուան, հայ հարուստ մեծատունը չգիտէ, որ ներկայումս ժողովրդական աւելի մեծ կարիքների առաջ ենք կանգնած, որ եղած չնչին գումարները բաւարար չեն. որ հասարակական հիմնարկութիւններին խոստացւած նիւթական օժանդակութիւնները վերջերս գնալով նւազել են։

Նա այդ չգիտէ...

Նրան յիշեցնում են այդ ամեն անգամ զանազան կոչերը, աղերսալից դիմումները...

Սակայն լսող կայ արդեօ՞ք։

Այո, կայ։ Լսում է նա, ով ինքն է զգացել, քաշել, թէ ինչ է տառապանքը, զուլումը. ով թշւառութեան, բաղդի հալածանքների, ճակատագրի անողոք հարւածների ներքոյ է գալարւել, արիւն թքել, այօրւայ իր կեանքն անիծել...

Այդ լսում է նա, ով իր վերջին գուլպաներն է հանում...

Իսկ այնտեղ, ուր կեանքի խրախճանքն է տիրում, ուր ձիարշաւների ու տափոտ կօկօտների կուլտն է պաշտւում. ուր լուկուլլեան քէֆերի ու բօրսային խաղերի մէջ են մարդիկ իրենց երջանկութիւնը որոնում.

Այնտեղ հայ հարուստը իր ականջները բամբակ է խոթում. ոչինչ չէ լըսում։

Եւ կը հագնի նա իւր փայլուն կօշիկները, մետաքսէ նուրբ գուլպաները, կերթայ զբօսնելու, ուրախ—զւարթ մըմնջալով՝

Տրա-լա-լա՛, տրու-լա-լա՛.

Իսկ բարձրաձայն երգելով—«Մեր Հայրենիք. թշւառ անտէր», նա կերթայ զբօսնելու այնտեղ, ուր կը լինի «Հայաստանը առանց հայի»։

Նիմանդ

ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

«Փայլակի» համարներում խօսել ենք արդէն Կովկասի քաղաքների միութեան IV համագումարի մասին, թւել ենք այն հարցերը, որոնցով զբաղւել է համագումարն իր նստաշրջանում։ Այժմ համագումարի մի շարք որոշումների մասին դիմւած է ուր հարկն է, և Թիֆլիզի քաղաքագլուխը դիմել է նահանգապետին՝ խնդրելով նրա աջակցութիւնը համագումարի որոշումների բարեյաջող լուծման համար։ Այդ որոշումները մեծ նշանակութիւն ունեն Կովկասի ազգաբնակչութեան համար, ուստի կարևոր ենք համարում ծանօթացնել նրանց հետ մեր ընթերցողներին, քաղելով „Кавк. Сл.“ թերթից։

1) Կազմակերպել Թիֆլիզում կովկասեան կենտրոնական, իսկ նահանգական, շրջանային և գաւառական քաղաքներում տեղական պարենաւորման (продовольственный) յանձնախմբեր, որոնք պէտք է մշակեն ազգաբնակչութեանը կենսական անհրաժեշտ մթերքներ մատակարարելու միջոցները և որոշեն իւրաքանչիւր շրջանի կարիքների համապատասխան ապրանքատար վագոններ բաց թողնելու խնդիրը։ 2) Կանոնաւորել Սև-ծովեան ապրանքատար շոգենաւերի պարբերաբար հաղորդակցութիւնը մինչև Բաթում, այնպէս որ այդ շոգենաւերը կանգ առնեն գըլխաւոր նաւահանգստներում և նրանցից մի քանիսը ծառայեն յատկապէս յանձնախմբի որոշած նպատակին։ Այլ և թոյլ տրւի ծովափնեայ քաղաքներից Կովկաս ներմուծելու ապրանքներ այն քանակութեամբ, որ աւելի քան բաւարարէ տեղական պահանջները, որի չափը քաղաքային ազգաբնակութեան համար որոշում է քաղաքային ինքնավարութիւններին կից կազմակերպւած պարենաւորման յանձնախմբերի միջոցով։ 3) Ուշադրութիւն հրաւիրել խճուղիների, մասնաւորապէս, Ելախ-Շուշի և Սուխում-Նովօրոսիյսկ խճուղիների անբաւարար դրութեան վրայ. ջրային հաղորդակցութեան մարդատար և ապրանքատար տարիֆների ցածացնելու վրայ։ 4) Պետական միջոցներից օգտւելով մշակել և բարելաւել Կովկասեան հանքային ջրերի աղբիւրները, որոնք ոչ միայն տեղական, այլ և համապետական նշանակութիւն ունեն և մինչև այժմ զուրկ են եղել օգտագործելու ամենատարրական պայմաններից. մտցնել Աբաստումանը նախագծւած երկաթուղագծի մէջ. օգտագործել Թիֆլիզի, Ծխալտուբի, Մայկոպի, Լենքորանի և այլ հանքային ջրերը վիրաւոր և հիւանդ զինւորներին բժշկելու նպատակով։ 5) Պետութեան օժանդակութիւնը կուրօրտներին։ 6) Կովկասում զեմստվօյական հիմնարկութիւններ հաստատել շուտափոյթ կերպով։ 7) Քաղաքների իրաւունքների և պարտաւորութիւնների ճշտիւ որոշումն, համահաւասար Ռուսաստանի ներքին նահանգների քաղաքների՝ զօրքի բնակարանային ծախքը թողնելու պետական գանձարանի վրայ։ 8) Իրականացնել Կովկասի Փոխարքայի խորհրդի ենթադրութիւնը՝ տարածել Կովկասի վրայ համապետական օրէնսդրական նորմաները զօրքի բնակարանային խնդրի նկատմամբ, որով մի կողմից կը թեթևանայ կովկասեան քաղաքների ֆինանսական դրութիւնը և միւս կողմից օրինաչափութիւն կը հաստատւի քաղաքների և զինւորական մասերի փոխ-յարաբերութիւններում։ 9) Յետ ստանալ պետական գանձարանից այն գումարները, որոնք ծախսւած են քաղաքների կողմից զօրահաւաքի առթիւ զօրքին տեղաւորելու համար բնակարաններ վարձելիս։ 10) Իրաւունք տալ քաղաքներին պարտք վերցնել պետական բանկից, ի հաշիւ նոյն տարւայ նախահաշւի, այն պայմաններով, որ գոյութիւն ունեն զեմստվօների նկատմամբ 1915 թ. յունւար 22-ի կանոններով։ 11) Ստանալ գանձարանից քաղաքների համարւող գումարները։ 12) Քաղաքների գանձարանին ունեցած պարտքերի հատուցման համար երկար ժամանակամիջոց տալ։ 13) Քաղաքների կարճ ժամանակով վերցրած պարտքերի հատուցման համար թոյլ տալ պարտք վերցնել փոխատու հիմնարկութիւններից։ 14) Ջնջել քաղաքներին բնակարանային և անշարժ ստացւածքների պետական տուրքերի մի մասը։ 15) Ազատել քաղաքները 1915 թւի քաղաքային ոստիկանութեան և զօրքին բնակարաններ տալու ծախքերից։ 16) Պետական գանձարանից անվերադարձ միջոցներ տալ քաղաքներին բժշկա-սանիտարական գործի և փոխա-

րինարար թանգութեան դէմ կռուելու համար, այն պայմանով, որ քաղաքները պարտաւոր են փոխարինաբար վերցրած դրամը յետ տալ այն ժամանակ, երբ կենսական անհրաժեշտ մթերքների գները կոտրուած կը լինեն։

Թէ որ չափով կը յարգուի քաղաքների միութեան IV համագումարի դիմումը կառավարութեան կողմից և որ կէտերը կը բաւարարուեն, այդ մասին կը հաղորդենք մեր ընթերցողներին, երբ հարցը կը պարզուի։

ԱՊԱԲԱԽՏ ԹԵՄԸ

Печальная истина лучше радостной лжи.

Байронъ.

III

«Ինչպէս յայտնեց հ. Զաւէնը»—գրում է պ. Ասլանեանը—«թեմիս դպրոցները կառավարելու համար յատուկ ուսումն. յանձնաժողով պէտք է ընտրուի»...

Եւ նկարագրելով թէ ինչպէս այդ յանձնաժողովը պէտք է դպրոցական ծրագիր կազմէ, երեք շրջանային տեսուչ հրաւիրէ (1200 ր. ամեն մէկին ռոճիկ), և ունենայ խորհրդակցութիւններ գիւղերից հրաւիրուած բանիմաց ներկայացուցիչների մասնակցութեամբ, դպրոցները ապահովելու հացի և ուսումը պարտադիր (ընդգծումը մերն է. Սեղոյ). դարձնելու խնդիրը նկատամամբ և այլն, գալիս է հետևեալ եզրակացութեան. «ընդհանրապէս հ. Զաւէնը մեզ այն յոյսը ներշնչեց, որ առաջիկայ ուսումն. տարուանից թեմի դպրոցները ազատուած են լինելու ներկայ քաօսային և խայտառակ վիճակից և դրուելու են խելացի և հաստատուն հիմքերի վրայ»։

Չմտնելով մանրամասնութիւնների մէջ և մի կողմ թողնելով այն, որ ծրագիր կազմելը էջմիածնի գործն է, որ 1200 րուբլով պատրաստուած, հմուտ մանկավարժ տեսուչներ չեն գտնուի, և որ պարտադիր ուսում մտցնելը հոգևոր առաջնորդի ոյժերից վեր է, որովհետև այդ հարցը համապետական խոշորագոյն հարցերից մէկն է, որը իր լուծումը կստանայ միայն օրէնսդրական պալատներում, շեշտենք այն, որ պ. Ասլանեանը խոստովանում է դպրոցների «քաօսային և խայտառակ» դրութիւնը, որից եթէ գործը «խելացի» և հաստատուն հիմքերի վրայ դնենք՝ կազատուենք։

Եթէ «խելացի և հաստատուն» հիմքերի բացակայութիւնն է պատճառ «քաօսային» դրութեան, ինչով են երաշխաւորում, որ այժմ «խելացի» կը լինին հիմքերը. ինչ նոր բան է արւում։ Չէ՞ որ այդ յանձնաժողովն ու շրջանային թեմ. տեսուչները առաջ էլ կային. որտե՞ղ է նրանց տուած օգուտը։

Ինչպէս ընթերցողը տեսաւ, որ երկու տարի առաջ մի յանձնաժողով ստեղծուեց և սպանուեց. ուրիշ խօսքով նա դրուեց այնպիսի պայմանների մէջ, որ բնականօրէն՝ մահանայ։ Այժմ երբ նորից են յուզում յանձնաժողովի հարցը, ինչո՞վ ենք ապահով, թէ նրան նոյն վախճանը չի սպասում, ինչ որ առաջինին։ Եթէ իրօք յանձնաժողովը մի շանթարգել չէ, (ինչպէս յաջող արտայայտուել է պ. Մելք. Եսայեանը «Փայլակի» № 32-ում) և նրան պիտի թոյլատրուի գործելու ըստ իր հայեցողութեան, ապա ինչու է նա «աննկատելի» կերպով շրջանակի մէջ դրւում և ցուցումներով բարձրից կաշկանդւում, նրա ապագայ գործելակերպը մատնանշելով՝ թէ յանձնաժողովը պէտք է ծրագիր կազմէ, երեք տեսուչ ունենայ և այլն և այլն... Գուցէ յանձնաժողովը երեք չէ, երկու կամ չորս տեսուչներ է յարմար գտնում ունենալու. ինչ կարիք կայ նրան պարտաւորացնելու որ անպայման երեքն ունենայ։

Ամեն ինչ մեզ համար պարզ է։ Մենք երբէք դէմ լինել չենք կարող յանձնաժողովի իդէային, եթէ նա ազատ լինի իր գործունէութեան մէջ։ Սակայն մենք ոչ մի լաւ բան չենք սպասում, քանի դպրոցական գործի բարձր վարիչները կը մնան նոյն անձինք։ Հաւատ ներշնչել կարող են նրանք, որոնք մի մարմին կը ստեղծեն և կը պաշտպանեն նրան և ոչ թէ նրանք, որոնք ստեղծելու և սպանելու են ընդունակ...

Դպրոցները բարելաւելու համար, անհրաժեշտ է դպրոցական խնդիրներով տոգորուած լինել, սիրել նրան. մի բան, որ չենք նկատում վերջին տարիներս։ Եւ քանի մեր դպրոցական գործերի արդի սիտուացիան շատերի համար պարզ չլինի. մինչև որ հիւանդութեանը ուղիղ դիօգնոզ չտրուի, լիակատար բուժումն անհնարին է.

Եւ երբ ակներև է, որ գաւառի դպրոցները վիվիսեկցիայի ենթարկելուց յետոյ «սպանում են» նոյն էքսպերիմենտները կրկնելու և նոյն խաղերը խաղալու թեմի գլխին, կարծում ենք, որ ընթերցողը կը համաձայնուի մեզ հետ, որ յիրաւի մեր թեմը ապաբախտ է...

Վերջացնելով մեր ասելիքը, պ. Ասլանեանին հետևեալ խորհուրդ կը տայինք. բնաւ պէտք չէ Զաւէն վարդապետի գովքը երգել. անհրաժեշտ է վերլուծական ընդունակութիւն, բաց և զգաստ աչքերով նայելու մեր իրականութեանը, որովհետև՝ печальная истина лучше радостной лжи...

Սեղոյ

ՂԱՓԱՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊՂՆՁԱՀԱՆՔԵՐԸ

II

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ թւերը, մարդ միանգամից կաշկանդւում է և ակամայից հարց տալիս—հապա ինչպէս են նրանք իրենց գոյութիւնը պահպանում տարիների ընթացքում և ինչ միջոցներով, երբ զուրկ են արտադրութեան այլ միջոցներից, ինչպէս օր. այգեգործութիւնից, գինեգործութիւնից և այլն և այլն։

Այստեղ արդէն օգնութեան են հասնում բնութեան հարստութիւն համարուող՝ Ղաթարի պղնձահանքերը, որոնց շահագործութեան համար պահանջւում են բազմաթիւ բանւորական ձեռքեր։ Եթէ այս միջոցը, աշխատանքի այս շուկան չլինէր, վաղուց արդէն Ղաթարի գիւղերը դատարկուած և գաղթած կը լինէին դէպի բանւորական աշխարհները։

Տնտեսական որոշ, անբարեյաջող պատճառների շնորհիւ, նրանք վաղուց արդէն զրկուած և կենտրոնացրած կը լինէին իրենց չնչին հողերը զանազան աւելի ուժեղ, աւելի կարող ու հարուստ գիւղացիների ձեռքը, իսկ իրենք պրոլետարիզացիայի ենթարկելով, վաղուց արդէն բռնած կը լինէին դէպի բանւորութիւնը տանող ուղին։

Չնայած նրան, որ հողատիրութիւնն ու կարգերը նոյնն են ու չեն փոխւել և շահագործումը գուցէ աւելի ևս կրկնապատկուել է, բայց շնորհիւ հենց Ղաթարի հանքերի, գիւղացիութեան պրօլետարիզացիան չափազանց դանդաղ կերպով է առաջ ընթանում։ Այստեղ ի հարկէ մի առաւելութիւն կայ նախ՝ որ հանքերը գտնւում և ընկած են շրջանիս գիւղերի համարեայ թէ կենտրոնում, երկրորդ՝ որ բանւորական աշխարհը այն հեռաւորութիւնը չունի ինչպէս օր. Բագուն և այլ վայրերը։ Այստեղ մարդիկ իրենց տնտեսութեան մօտալուտ վախճանը նկատելով, նետւում են խեղդող այդ ասպարէզը ու ժամանակաւորապէս դադարեցնում այնպիսին։ Իսկ աշխատանքի հեռաւոր շուկան ստիպում է նրանց շատ անգամ հրաժարուել բոլորովին ունեցուածքից, լիքւիդացիայի ենթարկելով այդպիսին ու յանձնուելով չարագուշակ ճակատագրին։

Այս ասելով չի նշանակում թէ շրջանիս բանւորութեան մէջ պրօլետարիացումն չի նկատւում, ոչ, նա գոյութիւն ունի, բայց ոչ այն չափով, որ չափով որ գուցէ գոյութիւն կունենար այլ տնտեսական պայմաններում։

Շնորհիւ վերոյիշեալ հանգամանքների, շրջանիս գիւղացիութիւնը, չնայած հողատիրութեան իր վատթար կացութեանը, քիչ թէ շատ բարեկեցիկ կեանք է վարում ու դեռ երկար ժամանակ մնում նորից նոյն փոքր սեփականատէրը, ինչ որ էր սկզբում։ Բնական է, որ գիւղացիութեան տնտեսական պայմանների այս տեսակ դասաւորման պատճառով, բանւորութեան թիւը ևս պէտք է ստուար լինի։ Եւ չկայ մի գիւղ, որ այդ կարիքը չզգայ ու, երեխայից սկսած մինչև մեծերը, բանւոր ձեռքեր չտայ գործարաններին։ Ահա յատուկ այդ աշխատանքի միջոցն է, որ գիւղացիութիւնը կարողանում է մինչև այսօր, իր հայրենիքում նստած, գոյութիւնը պահպանել և հողի պակասորդը լրացնել դրսի աշխատանքով։

Ճիշտ է, նրանք պատերազմի պատճառով աշխատող ձեռքերի բացակայութիւնից ներկայումս բաւականին տուժել են, բայց միջին թւով իւրաքանչիւր գիւղ տալիս է նորից մօտաւորապէս 50 բանւոր, որոնց ստացած ռոճիկների քանակը միջին թւով օրեկան 70 կոպ. է հասնում։ Եթէ հաշուի առնենք պղնձահանքերից Ա. գիւղը մտնող գումարների քանակը, տարեկան այդ թիւը հասնում է մօտաւորապէս 13000 ր.։ Կան նաև այլ եկամուտներ, որոնք գալիս են մասամբ լրացնելու մանաւորապէս Ա. գիւղի և ընդհանրապէս շրջանիս հայ գիւղացիութեան ծով ցաւերով լի կարիքները։

Ցայլ

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

— Կ. Հ. Բ. ընկ. կից կազմուած տաճկահայերի Հայրենակցական Միութիւնը իր Վանեցիների Մասնաճիւղի մայիս ամսին հաւաքուած ամսավճարներից և նուէրներից հազար ռուբլի յանձնեց Հայկական Կենտրոնական Կոմիտէին, խնդրելով այդ գումարը գործադրել Վանում հայրենի քաղաքի պաշտպանութեան և ազատագրութեան համար իրենց կեանքը զոհ բերած հերոսների թշւառացած այրիներին և որբերին օգնելու։

— Բուխարեստի տաճկական դեսպանատունը ռումինական մամուլի մէջ հրատարակել է մի զեկոյց, որով ասում է, թէ «ռուսները և հայերը բռնուած են բարբարոսութեամբ. հայկական չետաները, միացած ռուսների հետ, մինչև վերջին շունչը կոտորում են ազգաբնակութիւնը, այնպէս որ Վանի շրջագայքի 180 հազար թիւրք և քիւրդ ազգաբնակութիւնից հազիւ 30 հազար հոգին են ազատուել բարբարոսների ձեռքից։ Եւ այդ բոլորը թիւրք կառավարութիւնը չի հրատարակում՝ վատ հետևանքների տեղիք չտալու համար»... Անշուշտ այս զեկոյցը մի հակափորձ է վերջերս ռումինական և մանաւանդ բուլղար մամուլի բարձրացրած խիզախ յարձակումների՝ ընդդէմ թիւրքաց հայաջինջ քաղաքականութեան։

ԼՐԱՏՈՒ

ՇՈՒՇԻ

— Քաղաքային վարչութիւնը յանձնարարել է քաղաքային ճարտարապետին մաքրել տալ քաղաքի ջրամբարները, այլ և երեք ամսով վարձել մի մարդ ջրանցքի պահպանման համար։

— Ինչպէս լսում ենք քաղաքիս փոստ-հեռագրատունը մտադիր է տեղափոխելու թրքաց մասում գտնուող «Խանի տունը»։ Անհրաժեշտ է քաղաքային վարչութեան լուրջ միջամտութիւնը, ազգաբնակչութիւնը ազատելու այն մեծ անյարմարութիւններից, որ կը ստեղծուի այդ տեղափոխութիւնից։

— Մեզ խնդրում են դպրոցական վարչութիւնների ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ թատրոնական ներկայացումների ժամանակ, որպէս կարգադրիչներ մուտքի մօտ կանգնած են լինում աշակերտներ, որ առհասարակ ընդունուած չէ։

— Մեզ յայտնում են, որ քաղաքումս ստացւող «Լիսագօրսկ» հանքային ջրի մէջ երևում են միջատներ, որը կարելի է վերագրել ջրի կապալառուների շշերը մաքրելու նկատմամբ անփութութեանը։

— Ամսոյս 3-ին, «Եղբայրական Օգնութեան» կից կանանց կօմիտէն, իր միջոցները ուժեղացնելու համար ամառային ժողովարանի դահլիճում տալիս է երեկոյթ-զբօսանք, թատերական բաժնում կը ներկայացուին է. Բրանդէսի «Հիւր» դրաման 2 գործողութեամբ և Իվանովի «Ուրախ մայիս ամիսը» կօմեդիան 3 գործողութեամբ։ Ներկայացումից յետոյ տեղի կունենան եւրօպական և ասիական պարեր։

— Մօտ օրերս, քաղաքային վարչութիւնը ամբողջ կազմով դիտեց քաղաքումս գտնուող Գաբրիէլեանի, Մաղաթեանի և Առստամեանի կօնդիտէրի խանութները և սրանց արհեստանոցները ու գտաւ վերին աստիճանի կեղտոտ ու հակասանիտարական վիճակի մէջ։ Կազմուած է արձանագրութիւն և առաջարկուած է երեք օրուայ ընթացքում կարգի բերել փուռերն ու արհեստանոցները, այլև նախազգուշացուած է, որ նոյն թերութիւնները երկրորդ անգամ նկատուելուց, կփակուեն խանութներն ու արհեստանոցները և տէրերը օրինական պատասխանատուութեան կենթարկուեն։

— Քաղաքային վարչութիւնը հրահանգել է, որպէսզի քաղաքիս կօնդիտէրների արհեստանոցներում աշխատողները բժշկական քննութեան ենթարկուեն։

ԿՈՎԿԱՍ

— Հանգուցեալ Ա. Մանթաշեանի մեծ որդի պարիզաբնակ Յովհաննէս Մանթաշեանը նուիրել է Հայոց Դրամատիկական ընկերութեանը 10,000 ռուբ.։

— Փոխարքայի Խորհուրդը իր վերջին հերթական նիստում որոշել է յատկացնել զեմստւային միջոցներից 33 հազար ռ., Թիֆլիսում և Բագւում վարակիչ հիւանդութիւնների լաբարատորիաներ հիմնելու համար։ Թիֆլիսում հիմնուելիք լաբարատորիան ծառայելու է արևմտեան Անդրկովկասի՝ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կռուելու գործում, իսկ Բագւում հիմնուելիք լաբարատորիան՝ Անդրկովկասին։

— Շամախու ծխական ժողովը, լսելով իր ներկայացուցիչների զեկուցումը թեմական պատգամաւորական ժողովի մասին, ընտրել է Մ. Ք. Ղազարեանին, բժ. Լ. Աթաբէկեանին և Գ. Զուբարին ու լիազօրել է նրանց գնալ Էջմիածին, բողոքելու ժողովի որոշման դէմ։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Տեղեկութիւններ Ղափանից

Դպրոցական տարին անցաւ խաղաղ, առանց կրթական գործը խանգարող երեւոյթների և բաւականին արդիւնաւէտ, շնորհիւ թեմ. տեսուչ պ. Յովհ. Գէորգբէգեանի աչալուրջ հսկողութեան, որը այս դպրոցական սեզօնում երեք անգամ այցելեց մեր դպրոցները։

— Այս տարի արտասովոր եղանակներ են լինում։ Ամբողջ երեք ամիս՝ մարտ, ապրիլ և մայիս անձրեւային անցան։ Յունիսի սկզբներում մի քանի օր գեղեցիկ եղանակներ տեսանք։ Սակայն ահա երկրորդ շաբաթն է ինչ, որ ամեն օր միշտ կէս օրից յետոյ անընդհատ՝ երբեմն յորդառատ, երբեմն բարակ անձրեւներ են տեղում, որի շնորհիւ արտերը մեծ չափերով վնասել են։ Յորդառատ անձրեւները քանդել են դիք արտերը, իսկ մեղմ անձրեւներից կանաչները պառկել, կպել են հողին և փթել։ Անձրեւային եղանակների շնորհիւ ոչ միայն հունձը չի սկսւած, այլ և խոտերը չի հնձւած։ Այս հանգամանքը կարող է գալոց տարին անասունների կերի և հացի թանգութիւն առաջ բերել։ Գիւղերը դատարկւած են աշխատող ձեռքերից։ Թէ ով պէտք է կատարի աշխատող ձեռքերից զուրկ ընտանիքների դաշտային աշխատանքները՝ չենք հասկանում։

— Շրջանումս մարդկային կեանքը անապահով է դարձած։ Երթեւեկութիւնը խմբերով է կատարւում։ Մենակ մարդու գլխ ու դէն երթալը անհնար է դառել։ Աւազակները տարել են Ծաւ գիւղից 4 ջորի, Հանդ գիւղից 1 ջորի, իսկ Շիվանիձոր գիւղից մի երիտասարդ անյետ կորել է, որի դիակը մինչ օրս չի ճարւում։ Լուր կայ, որ սահմանի միւս կողմից պարսիկ չէտնիկները անցնում են Արաքսի մօտիկ Թրքաբնակ գիւղերին վնասում։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առած շրջանումս երեւցող չէտնիկներին արժանի կերպով պատժելու։

— Խիստ թանգութիւն է տիրում մեզանում։ Պատերազմը պատրւակ բռնելով մեր չարչիները իրենց հօր գինը դրել են ապրանքների վրայ։ Հասարակ չթի արշինը ծախում են 30—35 կ., շաքարը՝ 35—40 կ., նաւթը՝ 15 կ., լուցկին հատը 5 կոպ.։ Զարմանալու ոչինչ չկայ։ Այստեղ խաւար գիւղ է, ով է հարցնողը թէ խանութպանը անիրաւութիւն է անում։ Այստեղ առանց խղճի խայթոց զգալու, ում թուրը սուր է, կտրում է։

— Ամսոյս 7-ին մի խնջոյքում յօգուտ կամաւորների հաւաքեց սեղանակիցներից 16 ր. և առաքեց ըստ պատկանելոյն։

Արծւիկ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՄԱՐԱՍՈՒ ՋՈՐԻ ԲԵՐՔԸ

Ամարաս, 28-ին յունիսի

Այս տարի, ինչպէս երեւում է, շրջանըս շատ առատ հունձ էր ունենալու, բայց անձրեւները ամեն ինչ փչացրին։

Խոտի բերքը սպասածից աւելի էր, ժամանակին էլ հնձւեց, բայց փչացաւ հնձւելուց յետոյ. սեւացաւ, փթեց զօթմաններում։

Գարու հունձը արդէն վերջացել է իսկ ցորենինը նոր է սկսւում։ Ընդհանրապէս լաւ բերք են տւել այն արտերը, որոնք արեւկող և թումբերում են եղել. իսկ պարարտ, սեւահող արտերը, կամ ձորերում, քամիներին չենթարկւող արտերը խոնաւութիւնից «նստել են» և շատ չնչին բերք կը տան, եթէ այսուհետ, գոնէ, լաւ եղանակներ լինին։

Հնձած գարիները վնասել են անձրեւներից. բերքը բաւարար է եղել։

Ամբողջ շրջանի թթի այգիները վընասել են «շախկա» հիւանդութիւնից։ Ոչ ոք չէ մտածում օղի քաշել. Ամարասի մօտ մի գործարան միայն մտածում է՝ եղած թութը հաւաքել, մի բան քաշել։

Դժբախտաբար վնասւած են նաև խաղողի այգիները. հազիւ ուտելու խաղող լինի։

Թալեաբա

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

«Քաղաքացիական մահ»

Ջիակոմետտիի այդ դրաման, իբր հասարակական և գեղարւեստական արժէքով վաղուց հնացած, բայց և այնպէս այժմ էլ գրաւում է արտիստների ուշադրութիւնը։ Պատճառը Կորրադոի դերն է, որ իւր ուժեղ ու նուրբ հոգեկան վերապրումներով միշտ հանդիսացել է յաջողութիւնների և տապալումների փորձաքար արտիստական աշխարհում։

Գ. Փափազեանը Կորրադոի դերում ներկայացրեց խաղի գեղարւեստական կատարման միօրինակ։ Մի քանի դէպքերում, առանձնապէս Ռօզալիայի հետ ունեցած տեսարանում, թւում է, որ նա երբեմն կորցնում է գեղարւեստական տաքտը, վերջին գործողութեան մէջ երեւան հանեց վիճելի մոմենտներ կատարման գործում, բայց և այնպէս հէնց նոյն գործողութիւններում նա միաժամանակ երեւան հանեց խաղի զօրեղ փայլ։ Երեւում է, որ նա շկօլա անցած դերասան է։

Օվի Ահարոնեան Մօն Սինեօրի և Թաշճեան բժիշկ Պալմիէրի դերերում վատ չէին։ Բայց ցանկալի է տեսնել աւելի մտածւած, հարթ ու ազատ խաղ. տիպերի աւելի լուրջ ուսումնասիրութիւն։ Նոյնը կարելի է ասել և տ. Մամիկոնեանի մասին Ռօզալիայի դերում։ Արուս-Ոսկանեան չնայած, որ ըմբռնել էր իւր դերը և խաղում էր մտածւած, այնուամենայնիւ Ադդայի դերը, թւում է, այնքան էլ յարմար չէ նրա համար։

Գեղարւեստական դաստիարակութիւնից զուրկ մեր հասարակութիւնը, ցանկալի է, որ իւր ներկայութեամբ խրախուսէ դերասանական խումբն և իւր անկարգ վարք ու բարքով, կօրիդօրներում և ներս ու դուրս անելով, չխանգարէ խաղը և հանդիսականների հանգիստը։

Թ. Տ.—Ե.

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետր. հեռ. գործ.)

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆԻՑ

Օսովեց բերդից յունիսի 27-ի գիշերը մեր բերդապահ զօրքը դէպի դուրս գրոհ տալով, քարուքանդ արաւ թշնամու ականային (сапныя) աշխատանքները։ Եւգարնօյի շրջանում մենք ձեռք ձգեցինք և պայթեցրինք թշնամու ստորերկրեայ ականային անցքերը։ Իւզէֆով—Բրիխավա ճակատում կռիւները շարունակւում են։ Թշնամին յունիսի 27-ին շարունակում էր պահել 18 բարձրութիւնը և Կովէրսկ դաստակերտը և եռանդուն հակայարձակումներ էր անում Բըխավժինայի ու մատնանշւած դաստակերտի միջեւ։ Սակայն այս յարձակումը յետ մղւեց թշնամու համար շօշափելի կորուստներով։ Բրխավից հարաւ մենք վերցրինք մինչև 900 գերի, 14 սպայի և երեք գնդացիրի հետ։ Մնացեալ ճակատներում աչքի ընկնող ընդհարումներ չեն եղել։

— —

Կովկասեան զօրաբանակի շտաբից

Ծովամերձ շրջանում և Օլթիի ուղղութեան վրայ երբեմնակի հրացանաձգութիւն է։

Կարադերբենտի րայօնում, Կարադերբենտ—Ջանբէկ ճակատում, մեր զօրամասերը դէմ են կենում ուժեղ օգնութիւն ստացած թիւրք զօրքի գրոհին։

Մնացեալ ճակատում փոփոխութիւն չկայ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիայի վրայով ուղեւորել են Շւէյցարիա նախկին մինիստր Նէջիմեդին-էֆենտի և երիտ. թիւրք կուսակցութեան անդամներից մէկը՝ Ֆասսունը, որոնք լիազօրւած են հաշտութեան մասին բանակցութիւններ վարելու։

— Б. В. հաղորդում է, որ շուտով կը ստորագրւի Բուլգարիայի և Թիւրքիայի միջև դաշնագրութիւնը, որով Բուլգարիային կը վերադարձւի Ադրիանապօլիսը։

— Р. С.-ին հեռագրում են, որ Պոլսում քարածուխի բացակայութեան պատճառով դադարեցրել են աշխատանքները զինւորական գործարաններում, որոնք վերջերս կառուցել էին գերմանացիների ձեռքով։

— Իտալացիների առաջխաղացումը Իզօնցոյի հովտով յաջող զարգանում է։ Աւստրիական բանակի աջ թեւը յետ է շպրտւած շատ հեռու։

— Բուլգարիայի և Գերմանիայի միջև բանակցութիւններ են տեղի ունենում 250 միլիօն ֆրանկի փոխառութիւնն իրագործելու նպատակով։ Այդ գումարը Բուլգարիան ստացաւ ձմեռը Գերմանիայից իւր այն ծառայութիւնների համար, որ նա մատուցեց Գերմանիային, թոյլ տալով գաղտնի իւր երկրի միջով ռազմամթերք փոխադրելու դէպի Թիւրքիա։

— Б. В. հեռագրում են, որ Աւստրիան առաջարկել է Ռումինիային հողային հատուցումներ չէզօքութիւն պահպանելու համար. բայց այդ հողերի մէջ չի մտնում Տրանսիլվանիան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սօս գիւղ. 20 յունիսի

Թոյլ տւէք խնդրում ենք, Ձեր յարգելի «Փայլակ» թերթի միջոցով յայտնել հետեւեալը։*)

Այս անցած 1914/15 ուս. տարւայ սկզբին չգիտենք ում կողմից հրաւիրւած լինելով, մեր գիւղն է գալիս որպէս վարժուհի օր. Վիկտօրիա Դաւթեանը, որ 15 օր մնաց գիւղում և էլի ետ գնաց Շուշի, որովհետև գիւղը երեխայ չտւաւ կարդացնելու։ Հոգաբարձութիւնը, որի անդամներից մինն էլ ես, տողերիս գրողն եմ, հրաժարւած էր մի քանի պատճառներով. ուստի նոր նշանակւած Սուրէն արեղան հասարակութեան հետ բերանացի պայմանաւորւում է և ինձ հրաւիրում ուսուցիչ ծխ. դպրոցի՝ 150 մանէթ ռոճկով։ Հայ սուրբը վախենում է որ ռոճիկս դժւար դուրս գայ, փորձում է ցորեն գարի հաւաքի ռոճկիս մի մասի փոխարէն, բայց դա չէ յաջողւում. ժողովուրդը առաջարկում է որ ամեն ինչ երեխաէրը տայ, իսկ եթէ այդ էլ չյաջողւի, հայր արեղան ինքը խոստանում է բարեհոգի մարդկանցից կամ թեմական դպրոցից մի հարիւր մանէթ խնդրի տայ։ Այդպէս էլ հաւատացած ես շարունակում եմ իմ պաշտօնավարութիւնը։

Թոշակագրամից գոյանում է 66 մանէթ, 24 մանէթ էլ մեր գիւղումը ոչխար արածացնող չօբանից չօփ բաշիի են առնում ինձ տալիս ի հաշիւ ռոճկի, թէև ասում էլ են՝ որ այս վերջին գումարը ամբողջ գիւղի զինւորների համար գրած նամակներիս համար վարձատրութիւն են տալիս. բայց ես թէև էդ գումարն էլ եմ ռոճկիս հաշւին ընդունում, էլի մնում է գիւղը ինձ պարտք 60 մ. Հիմի Սուրէն արեղան այստեղ չէ, պ. Առաքելեանին մի քանի անգամ դիմել եմ, նա էլ ասել է թէ՝ ես էլ չեմ տեսուչ. այժմ չգիտեմ ով պէտք է վճարէ 60 մանէթը։

Այս մասին ես տարեկան տեղեկագրումը գրել ուղարկել իմ հայր Զաւէնին և սպասում եմ նրա կարգադրութեանը։ Հայր Զաւէնը կանէ կարգադրութիւնը, չգիտեմ. բայց ես ինչով եմ մեղաւոր. չէ որ այս չնչին ռոճկով ծառայել եմ, որ մեր գիւղի ուսումնարանը չփակւի։

Սօսի ծխ. դպրոցի նախկին հոգաբարձու և ուսուցիչ՝ Գարեգին Տէր-Մեսրոպեանց:

*) Տպում ենք անփոփոխ։ Ծան. խմբ.

ՓՈՍՏԱՐԿՂ

ԲԱԳՈՒ.—«Արեւի» խմբագրութեան. Ձեզ նամակ գրեցինք. «Փայլակը» կուղարկւի։

ԲԱԳՈՒ.—Դան-Սարին. Ինչ որ մինչև այսօր չենք տպագրել, այսուհետ ես չի տպագրւի։ Ոտանաւորները անյաջող էին։

Խմբ.-հր. Լ. Վարդապետեան

Печатать дозволено военной цензурой



Տպարան Մ. Բարաջանեանի Շուշում.